

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

### ԵՐԳԻԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Երգիծաբանութիւնն՝ որ է տեսակ ինչ վարդապետական քերթողութեան, կրնայ բոլորովին հռոմէական կամ լատինական անուանուիլ, ինչպէս կ'ըսեն Որատիոս և Կոլինտիլիանոս, որոյ իբրու հայր կը համարուի Լուկիլիոս. զոր ապա հասուցին 'ի ծայր կատարելութեան Որատիոս, Պերսիոս և Բոռնազ:

Երգիծաբանութեան միակ նպատակն է՝ ուղղել զբարս ժամանակակից մարդկան, ուստի և ազատօրէն և համարձակ կշտամբել զտխտս և զկիրս: Վերը յիշատակեալ երեք հռովմայեցի երգիծաբանք՝ զանազան եղանակօք և ոճով գրեցին իրենց քերթութիւնքը, որոց վրայ երկարելն աւելորդ է և մեր նպատակէն դուրս:

Որատիոսի ոճն՝ այնքան բարձր չէ. անոր համար ևս իւր երգիծաբանութիւնքը կոչեր է խօսք կամ ճառ, որոնք չ'ունին իւր ուրիշ տողից և նուազաց վսեմութիւնը և փափկութիւնը, և ոչ իսկ Տադաւափութեան ներդաշնակ և վայելուչ գեղեցկութիւնքը. և ուրիշ բան չեն, բայց եթէ արձակ գրութիւնք՝ չափով գրեալք, Ընդհանրապէս ոճն դիւրիմաց է և պարզ, այլ միանգամայն ճոխ իմաստիք. իրեն երգիծաբանութեանց նիւթ կ'առնու աւելի մարդկանց տկարութիւնքը և յիմարութիւնքը, քան թէ անոնց անհեթեթ ախտերը. կը կշտամբէ զայնս՝ ուրախ և ժպիտ գիմք. և մինչդեռ իբրու խոր իմաստասէր մը բարոյականութեան հրահանգներ և պատուէրներ կու տայ, կը ցուցնէ միանգամայն իւր խօսից մէջ պաշտատկանի մը ազնուականութիւն, Որատիոսի գեղեցիկ և փափուկ պատմութիւնքն, նուրբ և գոշորիկ նկարագիրքն, այն վէպերն և 'օրինակներն՝ զորս այնքան ճարտար և գեղեցիկ կերպով խառներ է աշխոյժ և կծու իմաստից և բացատրութեանց հետ, որք գրեթէ իւր ամեն երգիծաբանութեանց մէջ կը գտնուին, անկարելի է ընթեռնուլ առանց ուսանելու և զուարճանալու միանգամայն, որովք յիբաւի՝ ըստ վկա.

յելլո նշանաւոր քննադատից՝ կրնայ Որոտիոս գերադաս համարուիլ քան զբնաւ երգիծարանս:

Ահա թարգմանելով կը գնեմք աստ իբրու օրինակ, Որատիոսի Ա երգիծաբանութիւնը, զոր գրեր է ընդդէմ Ագաւից, որը թէ և տոգոհ իրենց բախտէն և վիճակէն, սակայն բնաւ չեն ուզեր փոխանակել այլոց հետ իրենց վիճակը. ուստի և հանդերձ իրենց այիքան մեծու- թեամբք և ընչիւք, թշուառ և աղքատ կեանք մը կը վարեն:

## Կ. ՈՐԱՏՏԵԱՅ ՓԼԱՊԿԱՍՈՍԻ

### Ա. ԵՐԳԻԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

— 238 —

Հիմարդեօք, Մեկենաս, զի ոչ կեայ որ հաճ ընդ նրսն՝  
 Զոր իցէ տըւեալ խորհուրդն և կամ բախտին ընձեռեալ,  
 Այլ զըրուտաիս զանազանից դաւանելոցն հանէ 'ի գով:  
 Վաշ երջանիկ թանգարաց, գոյէ սալարն հինաւուրց,  
 Ո, որ 'ի ձիգ իցն մարմնոյն 'ի վաստակոց լուծեալ անդամք,  
 Այլ յայսոյն հարաւայնոց կոծել ըզնաւն անդ 'ի յերեր,  
 Բա, գոյէ վաճառական, քաջ յոյժ ընտիր զինուորութիւն.  
 Զի զինչ այլ. խըմբի գուպար 'ի ազգմ 'ի մարտ, և ճեպ 'ի ճեպ  
 Երագափոյթ սլանայ մահ, կամ թէ զըւարթ յաղթանակ,  
 Իսկ որ հըմուտն իցէ յօրէնս՝ տայ մըշակին երանիս,  
 Մինչ 'ի խօսել դեռ հաւուն՝ բախեն զիւր դուռն 'ի հարց ու 'ի խոյզ,  
 Յերաշխի տըւեալ՝ գեղջէ մինչ վարիցի անդր 'ի քաղաք,  
 Երջանիկ ըզննակս յաւէտ կարգայ միշակ ըզքաղաքին,  
 Եւ այնքան սոյնգունակ բանք 'ի շըրթանց լըսին յաճախ,  
 Մինչև լինել շաղաւաշուրթն ինքնին փաքեայ ծանրատաղտուկ:  
 Այլ մի յերկար թէ կալայց ըզքեզ, լուր, յո՛ զիրն ածից յով: —  
 Թէ յանմահից որ 'ի դից՝ Ես, ասացէ, աւասիկ  
 Զոր թէ կամիք արարից. եր դու թանգար՝ որ ցարդ զինուոր,  
 Իսկ դու լիթիւ հողագործ՝ որ ցարդ ներկուս իրաւագէտ,  
 Իւ դարձադարձ շըրջեալ կողմանց, դուք այսր և անդր երթիցեն այլք.  
 Զի կաք, եհէ, զինչ գործէք. — ոչ ըզձակերտ լիցին նոքա:  
 Այլ ահա քաջ իսկ ձեզ պատեհ զերանութեան զհետ կըրթելոյ:  
 Առ քնչ ապա արժանեօք ծանրացասումն ոչ սըրտնեցի  
 Զերկուս ծընօտն այտուցեալ փըքոցուռոյց մեծն Արամադդ,  
 Եւ գոլյապա յաղերս ուղին ոչ հեշտալուր զինքն ասացէ:  
 Այլ մի գունակ զիս ծաղրածուաց ընդ խաղ խօսել թէ կարծիցես,  
 Թէ պէտք զինչ որ ծիծաղին ասել զիրաւն արգելուցու:

յելլո նշանաւոր քննադատից՝ կրնայ Որոտիոս գերադաս համարուիլ քան զբնաւ երգիծարանս:

Ահա թարգմանելով կը գնեմք աստ իբրու օրինակ, Որատիոսի Ա երգիծաբանութիւնը, զոր գրեր է ընդդէմ Ագաւից, որը թէ և տոգոհ իրենց բախտէն և վիճակէն, սակայն բնաւ չեն ուզեր փոխանակել այլոց հետ իրենց վիճակը. ուստի և հանդերձ իրենց այիքան մեծու- թեամբք և ընչիւք, թշուառ և աղքատ կեանք մը կը վարեն:

## Կ. ՈՐԱՏՏԵԱՅ ՓԼԱՊԿԱՍՈՍԻ

### Ա. ԵՐԳԻԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

— 238 —

Հիմարդեօք, Մեկենաս, զի ոչ կեայ որ հաճ ընդ նրսն՝  
 Չոր իցէ տըւեալ խորհուրդն և կամ բախտին ընձեռեալ,  
 Այլ զըրուտաիս զանազանից դաւանելոցն հանէ 'ի գով:  
 Վաշ երջանիկ թանգարաց, գոյէ սալարն հինաւուրց,  
 Ո, որ 'ի ձիգ իցեն մարմնոյն 'ի վաստակոց լուծեալ անդամք,  
 Այլ յայսոցն հարաւայնոց կոծել ըզնաւն անդ 'ի յերեր,  
 Բա, գոյէ վաճառական, քաջ յոյժ ընտիր զինուորութիւն.  
 Ձի զինչ այլ. խըմբի գուպար 'ի ազգմ 'ի մարտ, և ճեպ 'ի ճեպ  
 Երագափոյթ սլանայ մահ, կամ թէ զըւարթ յաղթանակ,  
 Իսկ որ հըմուտն իցէ յօրէնս՝ տայ մըշակին երանիս,  
 Մինչ 'ի խօսել դեռ հաւուն՝ բախեն գիւր դուռն 'ի հարց ու 'ի խոյզ,  
 Յերաշխի տըւեալ՝ գեղջէ մինչ վարիցի անդր 'ի քաղաք,  
 Երջանիկ ըզննակս յաւէտ կարգայ մըշակ ըզքաղաքին,  
 Եւ այիքան սոյնգունակ բանք 'ի շըրթանց լըսին յաճախ,  
 Մինչև լինել շաղաւաշուրթն ինքնին փաքեայ ծանրատաղտուկ:  
 Այլ մի յերկար թէ կալայց ըզքեզ, լուր, յո՛ զիրն ածից յով: —  
 Թէ յանմահից որ 'ի դից՝ Ես, ասացէ, աւասիկ  
 Չոր թէ կամիք արարից. եր դու թանգար՝ որ ցարդ զինուոր,  
 Իսկ դու լիթիւ հողագործ՝ որ ցարդ ներկուս իրաւագէտ,  
 Իւ դարձադարձ շըրջեալ կողմանց, դուք այսր և անդր երթիցեն այլք.  
 Ձի կաք, եհէ, զինչ գործէք. — ոչ ըզձակերտ լիցին նոքա:  
 Այլ ահա քաջ իսկ ձեզ պատեհ գերանութեան զհետ կըրթելոյ:  
 Առ քնչ ապա արժանեօք ծանրացասումն ոչ սըրտնեցի  
 Չերկուս ծընօտն այտուցեալ փըքոցուռոյց մեծն Արամադդ,  
 Եւ գոլյապա յաղերս ուղին ոչ հեշտալուր զինքն ասացէ:  
 Այլ մի գունակ զիս ծաղրածուաց ընդ խաղ խօսել թէ կարծիցեն,  
 Թէպէտ զինչ որ ծիծաղին ասել զիրաւն արգելուցու:

Ջօրէն համբոյր վարդապետաց՝ որ տան մանկանց բոկեղս անոյշ,  
 Ուսանել զի փոյթք զըտցին ըզլըպրութեանց նախկին հրահանգս.  
 Այլ քաւ 'ի բաց ըզխաղն եղիալ, ըզլուրլ ըզգօնսն խնդրեսցուք:  
 Որ 'ի պինդ գործէ յարօր զերկիր խոպան դերևացեալ,  
 Դա նենգաժող պանդոկապան, և զօրական և նաւատիր՝  
 Որք նաւաչու յանդրգնօրէն յածին ընդ ծով ճեմ ըզճեմի,  
 Ի սոյն միտս, ասեն, ժուժալ 'ի տոկ վըշտաց տաժանակիր,  
 Զի անդորր 'ի յալեղթ կիցցեն յանհոգս յակաստանի,  
 Մինչ պարէնք օրապահիկ կայցեն առատ մթերեալք 'ի դէզ,  
 Որգունակ մանրիկ նըկուն՝ այլ մեծաշան գործէ մըրջիւն,  
 (Զի յօրինակ կայ տըւեալ), առեալ տանի իւր բերանով  
 Զորինչ մարթէ՝ և կուտեալ դիզէ յամբարսըն շեղձաշեղծ,  
 Ոչ անգուշակ ապառնոյն կամ յարկածից թէ անըզոյշ,  
 Որ մինչ յորժամ յաւարտ դիմեալ զամի ի փախուստ նեղէ Զըրհոսն,  
 Զեկանէ 'ի դուրս՝ անանի զոր մթերեաց երբեմն ըզգօն:  
 Իսկ 'ի շահիցք ըզքեզ ոչ քեցել 'ի բաց թէ զօրեսցեն՝  
 Ոչ հրատապ ամառն և ոչ ձըմեռն, երկաթ, ոչ հուր կամ ծով,  
 Գեղ ոչ մի խոչ, լոկ թէ միայն չիցէ քան զքեզ ոք ճոխագոյն:  
 Զինչքեզ շահ անբաւալիր բեռն արծաթոյ և կամ ոսկոյ,  
 Երկիւղախառն ընդ երկրաւ զօղել 'ի պահ գաղտագողի:  
 — Զի թէ ինչ մի բարձցի անտի, լիցի սին խերեւէլ. —  
 Այլ թէ չիցէ այս, գեղեցիկ զինչ այդ կուտեալ ունիցի շեղծ.  
 Թէ ցորենոյ տասըն բիւր քոռ քոյինըդ կալ մանրեսցէ,  
 Ոչ թէ դովին առաւել կալցի քան զիմս քոյդ որովայն.  
 Որպէս զի թէ 'ի ստրկաց պարկ ծանրաբեռն տարցիս հացի,  
 Ոչ ինչ այնու առաւել քան զայլ ծառայս թէ առնուցուս:  
 Աղէ ասա. Զինչ օգուտ՝ որ 'ի սահմանս կեցցէ բնութեան՝  
 Թէ արտավարս ինչ հարիւր կամ թէ հազար իսկ գործեսցէ:  
 — Այլքաղցր է ապաքէն 'ի մեծակոյտ բառնալ շեղջէ: —  
 Մինչ դու անտի թողուցուս առնուլ մեզ խուն ինչ 'ի փորուէ,  
 Զի զքոյդ յաւէտ ըշտեմարանս քան զմեր անօթըս գովեսցես:  
 Որպէս թէ պէտք քեզ բաժակի կամ սափորոյ լինէր ջրոյ,  
 Ասէիր. ի մեծէ ըմպել գետոյ ես յօժարիմ,  
 Քան թէ սակաւ առնուլ լուր խունակարկալ յաղբերակնէդ.  
 Եւ որք այսպէս յառաւել արկանեն ակըն քան զարժան,  
 Մաստկազայրն Ափիդոս ընդ գետափին վարեալ տարցի.  
 Իսկ որ ըստ չափ պիտոյից անձինն ինչ ոք լիցի խնդիր,  
 Ջուր տըղմալից արբոյն նա ոչ, և ոչ յալիս թէ զրաւեսցի:  
 Այլ յովք 'ի մարդկանէ շամչեալք 'ի սուտ ցանկութենէ,  
 Զէ ինչ շատ այնքան, ասեն, լինել՝ որքան ինչ ունիցիս:  
 Ո՛հ, զինչ առնել իցէ նըմա. թող այնպիսոյն լինել թըշուառ՝

Յորքան յօժար զայդ արասցէ՝ գերդ որ յԱթէնս յիշատակեալ  
Այր ժլտտ և ճոխ՝ և սոքորեալ ունչս ամբոխին առնել ձայնի.  
— Զինէն ամբոխըն չըլընջէ, այլ անձնահաճ խընդամ՝ առտնին,  
Մինչ յարկեղ դէտակն յարծաթս իմ՝ մեծագոյնն ունիցիմ։ —  
Տանտալոս ծարաւահիւժ ցանկայ սահեալ շուրցն 'ի չըրթանց.  
Ըզմէ այդ ծաղր. յանուանն 'ի շուրջ՝ առակն ըզքէն պատմիցի.  
Յամենուտ կուտեալ 'ի քուրծս անկեալ 'ի նիրհ կաս պարտասուն,  
Որպէս թէ նըւիրական խնայել քեզ դէպ լինէր իրաց,  
Կամ տաստակօք նըկարակերտ թէ վայելել հարկէիր։  
Յհնչ պէտս արծաթ 'ի հեթեթանս թէ վարիցի՝ ոչ գիտիցես.  
Գընեսցի հաց, խաղաւարտ նովին, գինւոյ և վեցեակ չափ,  
Եւ յորոց գամ մի զլացեալ բնութիւն մարդոյ զբժղմընեսցի.  
Զինչ աղէ շահ, սիրտ 'ի թընդոյ աըքնել արթուն ահ ընդ ահ,  
Ըզգամ աուընջեան և զիշերոյ 'ի ժանտաժուտ խիթեալ գողոց,  
Ի հըրդեհից և 'ի գերեանց՝ զի զքեզ կապտեալ մի տացեն խոյս.  
Իցիւ թէ յընչից աստի լինէր ինչ յանգ գոլ չըբաւոր,  
Իսկ մինչ յորժամ ցըրտահար մարմինդ 'ի դող ցաւեսցի,  
Կամ թէ համբուն այլ պատահար բեւեռեսցէ զքեզ 'ի մահիճ,  
Իցեն քեզ ոք մօտ աընթեր 'ի հանդերձանս հնարից դեղոյ,  
Կամ թէ 'ի կոչ և 'ի խընդիւր ոք բըժըլկին՝ զի յարուսցէ  
Եւ զքեզ քոյին տացէ որդւոցդ և սիրասուն մերձաւորաց,  
Զկամին ընդ քոյդ առողջութիւն՝ ոչ կին և ոչ իսկ որդիք.  
Դրացիք ողջոյն ատեցին, ծանօթք, մանկսի և օրիորդք.  
Զարմանայցես, զի քեզ ոք սէր հատուցանէ ոչ՝ զոր չ'արծես,  
Մինչ դու զարծաթդ 'ի վերոյ գեր քան ըզբաւալն զընիցես,  
Մի՞ դու ունել կամիցես քեզ բարեկամս և մշտերմս,  
Զորս անաշխատ ետ քեզ բնութիւն՝ ըզտոհմային աղգականս.  
Ումպէտ ունայն ջանքդ եղիցին. որպէս զի ոք ըզյաւանակ  
Վազել վարդել 'ի դաշտ՝ սանձաց գոլ հըպատակ մարդեսցէ,  
Խընդրելոյն հուսկ դիցի վախճան. և որքան շատ թէ ունիցիս,  
Խուն իսկ քեզ իցէ կասկած 'ի չըբաւոր անինչ կենաց.  
Եւ ձեռընթափ սկըսիր լինիւ յանշայեկան 'ի վաստակոցդ,  
Մինչ ունիցիս լիովին՝ ոյց ցանկայիր դու կաթոգի.  
Եւ մի հանգոյն Ումիդեայ գործիցես (չէ առակս 'ի ձիգ),  
Այր ընչեղ այնքան և ճոխ՝ մինչ գըլիովին կըռուել զարծաթ.  
Այնքան և ուշդ, զի չագանէր քան ըզժառայս չըբեղագոյն.  
Եւ զանդիտեալ կասկածէր մինչ 'ի կենացն հուսկ յետին շունչ,  
Թէ չըբութիւն զինք պարենի մի բնաւ գուցէ լըլկեսցէ,  
Այլ ըզնա կրտրեայ ընդ մէջ յեսանասուր 'ի տապար  
Ազատագիրըն նորա՝ Տիւնդարիգեանցն ամեհագոյն.  
Յհնչ արդ յորդոր ինչ լինիս. միթէ Մենեսայ կեցից գունակ,

կամ թէ զօրէն նոմենտացոյն։ — Այլ զիրերաց գու հակարաշ  
Գուեն 'ի գործ գուգել զընես. զի չեն ինձ կամք ամենեւին  
ի խափանել զոլ ազա՛ թէ իցես խեռ և ժիտ բմբոստ.  
Ձի 'նդ Տանայիս և ընդ աներրն Վիսելլայ գոյ ինչ խրտիր։  
Ամենայնի է չափ կըշիռ. ե՛ն են, այո՛, ըստոյգ սահմանք,  
Քան զօրս ուրեք անդրագոյն չմարթի 'երբեք կալ ուղղութեան.  
Դարձ անդր ուստի ելի առնեմ. չիցէ արդ ոք իբրև զազան  
Անձնահաճ, այլ գովեսցէ զանազանիցն հետեւելիս.  
Եւ մաշեսցի նախանձարեկ յունել ըստինս գիրապարտ  
Ալոյի օտարին. և ո՛չ արդեօք կըշռեսցէ զանձն  
Ընդ ամբոխի մեծի տնակացն, և ջանասցի գըլել զայլովք.  
Որ սոյնգունակ փութասցի՝ ճոխագունին միշտ պատահէ.  
Ջերդ մինչ սըմբակք զամեհի ձիս պախուցաթափ ճեպեալ վարեն,  
Եւ կառավար պընդի չձիոց կրնի՝ զիւրովքն գըլելոց.  
Յընչաց քերեալ զյառաջադէմն՝ որ արշաւէն զոյգ ընդ յետինս.  
Աստի ահա, զի գուն ուրեք մարթ է հնարել գըտանել՝  
Որ ասասցէ երջանկաբաստ կեցեալ, և գոհ մեկնեսցի  
ի վճարել պահուն կենաց, զոր օրինակ յազ հացակից.  
Արդ շատ իցէ. զի մի գիջակըն նրիսպինեայ 'ի մատենից  
Ձիս բանաբաղ համարիցիս, ոչ ևս այլ նոր յաւելից բան։

## ՓԱՐԻՋՈՒ ԱՇԽԱՐՀԱՀԱՆԴԵՍ



ԲԱՏՄԱՆ նշանաւոր օրը՝ արդէն հնացեալ և հեռաւոր յիշատակ  
մ'եղած է զարդիս։

Այն օրէ յետոյ Արիստան դաշտը հետզհետէ արագ արագ  
կատարուելով՝ իւր բովանդակ պայծառութիւնն ստացած է այժմ,  
կապտագոյնը կը տիրէ ամենուրեք աղիւսաց կարմրոյն հետ գու-  
գեալ, որ Աշխարհահանդիսիս կապոյտ վերադիրն տուած է։

Ելքերտական լոյսն ամէն երեկոյ կանոնաւ որապէս կը լուսաւորէ  
այսուհետեւ, գեղանի բայց և տարօրինակ քնագրոյժ մի տալով մասնաւորա-  
պէս Ասիական և Ափրիկոյ գեղօրէից և վրանսրնակացն, յորս մարթ է չըջել  
մինչև 'ի մետասան ժամ երեկոյին այս կեղծալուսնի լուսովն, և թափառել  
խոճթաց և եղէգնապատ բնակութեանց մէջ. որոց անապատացեալ երևոյթը  
և բնակողոց տխուր նայուածքը՝ անդիմադրելի, թէպէտ անոյշ մեղամաղձիկ  
խորհրդածութիւններ կ'ազդեն բեզ։

Ընենք մեր առաջին մուտքը յաշխարհահանդիսիս՝ քսան և երկու դրանց  
գլխաւորէն որ 'ի Թրօքատէրօ։

Յաղթական կամար մ'է, ծաղկանց հովտի մը վրայ բարձրացեալ, Բուսոց և